Արթիկ համայնքի 2023 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից, խորհրդակցական կարգով գործող ՀԶԾ կառավարման հանձնաժողովի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2024թ-ի փոտրվարի 20-ի թիվ 37-Ա որոշմամբ

2024թ.

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Արթիկ համայնքի
ավագանու 2024 թվականի փետրվարի 20–ի
N 37– Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը կազմվել է համայնքի ղեկավարին կից գործող համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի և համայնքի աշխատակազմի կողմից իրականացված ոլորտային ծրագրերի մոնիթորինգի արդյունքում:

Արթիկ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Արթիկ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանով ներառված ծրագրերի մոնիթորինգի և գնահատման աշխատանքներին ներգրավվել են ավագանու անդամներ և շահագրգիռ այլ անձինք:

2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մոնիթորինգի նպատակը ոլորտային ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները, որակը և ծավալները, դրանց տեխնիկական առաջադրանքների և նախահաշիվների պահանջներին համապատասխան իրականացնելն է և ընթացքում բացահայտված շեղումները վերանայելը կամ, ավելի բարդ դեպքերում՝ ծրագրային փաստաթղթերը վերանայելու և դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ ՏԻՄ-երին առաջարկություններ ներկայացնելը:

Մոնիթորինգը և գնահատումն իրականացվել է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանով և մոնիթորինգի անձնագրով սահմանված ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրման, դրանց փաստացի արժեքները հաշվարկելու ելակետային ու թիրախային արժեքների հետ դրանք համեմատելու միջոցով: Ցուցանիշների արժեքների շեղումները կամ դրանց պատճառները մեկնաբանված են Հավելված 2-ի Ցուցանիշի շեղման մեկնաբանություն սյունակում:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքի ավագանուն ներկայացվել է 2023 թվականի Համայնքի տարեկան աշխատանքային պլան-ը (ՏԱՊ)։

Տարեկան պլանավորումը հնարավորություն է տվել ի մի բերել տարբեր աղբյուրներից (համայնքի և պետական բյուջեներ, դոնոր, միջազգային, հասարակական կազմակերպություններ, ձեռներեցներ, բարերարներ, և այլն) ֆինանսավորվող ծրագրերն ու միջոցառումները։ Ինչպես նաև արձանագրել շեղումները և դրանց պատճառները։ ՏԱՊ-ի իրականացման մոնիթորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը հնարավորություն է ստեղծում հետագա ծրագրերում փոփոխություններ և շտկումներ իրականացնելու համար։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Աղյուսակ 1

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԱՐՏԱԴԻՐ ԽՆԴԻՐ	2023 թ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ (ՀԱՋ. ԴՐԱՄ)	ՈՐԻՑ		20123թ. ՓԱՍՏԱՑԻՐ (ՀԱՋ. ԴՐԱՄ)	ՈՐԻՑ	
		ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ		ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2. Գույքի կառավարում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3. Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն	1213407.3	746494.8	466912.5	1818179.4	1617063.7	201115.7
4. Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում	254375.4	196273.0	58102.4	186988.8	186988.8	0
5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	18000.0	18000.0	0.0	15855.0	15855.0	0.0
6. Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում	87623.0	87623.0	0	85651.3	85651.3	0.0
7. Համայնքում բնակարանային շինարարության խթանում	153422.0	0.0	153422.0	150783.8	0.0	150783.8
8. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, համայնքի աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովվում, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովվում	91000.0	91000.0	0.0	71639.5	71639.5	0.0
9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում	540959.6	346748.1	194211.5	411749.9	332710.3	79039.6

10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը	4000.0	4000.0	0.0	1707.6	1707.6	0.0
11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում և իրականացում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
12. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
13. Շրջակա միջավայրի պահպանություն	155000.0	155000.0	0.0	152477.8	152477.8	0.0
15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում	6291.5	6291.5	0.0	6291.5	6291.5	0.0
16.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
17. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
18. Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
19. Բարեգործության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

Աղյուսակ 2

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԱՌՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ԲԱՂԱԴՐԻՉ	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԱՐԺԵՔ (2023)	ՑՈՒՑԱՆԻՇԻ ՓԱՍՏԱՅԻ ԱՐԺԵՔ (2023)	ՑՈՒՑԱՆԻՇԻ ՓԱՍՏԱՅԻ ՇԵՂՈՒՄ (2023)	ՑՈՒՑԱՆԻՇԻ ՇԵՂՄԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ				
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	1	-	-	*ՀՀ վիճակագրական կոմիտեի Շիրակի մարզային վարչությունից տվյալներ դեռևս չեն տրամադրվել*
Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ՝ արտահայտված տոկոսով	1.9	1.9	-	*Բազմաթիվ փոխադրամիջոցների՝ երկրից բացակայությամբ պայմանավորված*
Համայնքի գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ՝ չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով	52102	52268	166	*ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից տվյալներ դեռևս չեն տրամադրվել*
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ				
Հեղեղատարների մաքրում(արտահայտված մետրերով)	1500	1760	+260	*Բոլոր բնակավայրերում*
ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ				
Համայնքում արտադրական, հասարակական, սննդի և սպասարկման ոլորտում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը	250	245	-5	*Շեղումը ստանդարտ է և պայմանավորված է ԱՁ-ների և իրավաբանական անձանց գործունեության և՛ դադարեցումով, և՛ նորերի բացմամբ:*
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ				
Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ	1040	4060	+30	*Արթիկ համայնքի <<Փանիկի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի շահագործման հետ կապված*
Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից	լավ	լավ		*Արթիկ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների ձմռան ամիսների գործարկման հետ կապված*

<<Հոռոմի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի կառուցման իրականացում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	75	100	-25	*Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից շինարարական աշխատանքների ձգձգում*
«Նոր Կյանքի» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի կառուցման իրականացում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	10	10		
Արթիկ քաղաքում մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի կառուցման իրականացում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	10	10		
Արևշատ գյուղում մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի կառուցման իրականացում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	10	10		
<<Լեռնակերտի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի մանկապարտեզների շենքերի ընթացիկ նորոգում, (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	23195.7	23195.7	0000	*Նախադպրոցական ուսումնական հաստատություններում շենքերի հիմնանորոգում*
<<Արթիկի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում, (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	50190.0	50190.0	0.0	*Նախադպրոցական ուսումնական հաստատությունում շենքերի հիմնանորոգում,*
<<Արթիկի թիվ 3 մանկապարտեզ>> և <<Արթիկի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ների մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում, (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)ՀՈԱԿ-ի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում, (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	466912.5	201115.6	265796.9	*Նախադպրոցական ուսումնական հաստատություններում շենքերի հիմնանորոգում*
ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ				
Համայնքապետարանի կողմից կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ	570	576	+6	*Այլ համայնքների և կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ*
Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ	49	51	+2	
Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների, ու պատանիների թիվը համայնքի երեխաների ու պատանիների թվին	1209	1250	+41	

Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից	լավ	լավ		
Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայքից դուրս մշակութային օջախներ	*280*	300	+20	*Հրավերներ, համագործակցություն*
Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն	14	15	+1	*Սարատակ գյուղում դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նորոգվել, կահավորվել և վերագործարկվել է գրադարան*
Համերգների, փառատոնների կազմակերպում (համայնքապետարանի կողմից կազմակերպված միջոցառումների թիվ)	12	7	-5	*Նոր համագործակցությունների, փառատոների անցկացում՝ մասնակից կողմերի աջակցությամբ*
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ				
Անապահով ընտանիքներին սոցիալական աջակցության իրականացում (աջակցություն ստացող ընտանիքների թիվ)	973	549	+424	*Փաստացի դիմումների և հանձնաժողովների աշխատանքների արդյունքում, և ևս 424 Արցախի Հանրապետությունից տարհանված ընտանիքներին սննդի և հիգիենայի պարագաների տրամադրում*
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ				
Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ	29	29	0	
Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ	7	10	+3	*8-րդ համահայկական խաղերով պայմամավորված՝ մրցումների թվի ավելացում և Բասկետբոլի տղամարդկանց առաջնության Պրոբասկետի <<Ա>> լիգայի խաղեր*
Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	329	350	+21	
Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից	բավ	բավ		
«Արթիկի Ֆուտբոլի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	25510.0	24958.4	-551.6	138 երեխա թվաքանակ

«Արթիկի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	30563.0	29636.2	-926.8	97 երեխա թվաքանակ
«Արթիկի մարզահամալիր» ՀՈԱԿ-ի գործունեության ապահովում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	31550.0	31056.7	-493.3	93 երեխա թվաքանակ
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ				
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	առկա	առկա		<<Շիրակ-9>>, <<Շիրակ-10>>, <<Շիրակ-11>> միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման ծրագրով միայն տարվա 3-րդ եռամսյակում հասանելի դարձավ հատակագիծը
Բարվոք վիճակում գտնվող բազմաբնակարանային շենքերի հարաբերությունը համայնքի բազմաբնակարանային շենքերի ընդհանուր թվին	227	145	+15	Սուբվենցիոն ծրագրի շրջանակում
Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների՝ ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը՝ արտահայտված տոկոսով	20	20	+9,9 կմ	Իրականացվել է սուբվենցիոն ծրագրերով ասֆալտապատման աշխատանքներ
Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին	55	60	+5	
Համայնքում քաղաքաշինական կանոնադրության առկայություն	առկա	առկա		
Կառուցապատման թույլատրության մեջ նշված ժամկետների պահպանմամբ իրականացված շինարարությունների թվի հարաբերությունը համայնքում իրականացված շինարարությունների ընդհանուր թվին	60	60	0	
Համայնքում հավաքված և աղբավայրերում տեղադրված աղբի հարաբերությունը համայնքում առաջացող ամբողջ աղբին՝ արտահայտված տոկոսով	100	80	0	

Համայնքի սանիտարական մաքրման ենթարկվող տարածքի մակերեսի հարաբերությունը համայնքի ընդհանուր տարածքի մակերեսին՝ արտահայտված տոկոսով	3	3	0	
Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանությունից և սանիտարական մաքրումից	լավ	լավ		
Համայնքի կանաչ տարածքների տարեկան աճ՝ արտահայտված տոկոսով	1	1	0	
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ				
Ռազմական գործողությունների մասնակիցներին և նրանց ընտանիքներին աջակցության ցուցաբերում (հազար դրամ)	8645.0	8645.0	-	*Փաստացի զինկոմիսարիատի կողմից տրամադրած ցուցակների և հանձնաժողովների աշխատանքների արդյունքում*
ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄ				
Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ	3	3	0	*Արտաքին միջոցներ, համագործակցություններ, ֆինանսական միջոցների ներգրավում*
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ				
Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքին ինտեգրվելուն միտված ծրագրերի իրականացում (միջոցառումների թիվ)	1	1	0	
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ՝ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ				
Համայնքապետարանի հետ համատեղ բարեգործական ծրագրերի իրագործում (միջոցառումների թիվ)	20	2	+18	*Հրատապ ծրագրերի իրականացման անհրաժեշտությամբ, Արցախից բռնի տեղահանված և Արցախից բռնի տեղահանված և Արթիկ համայնքում տեղավորված անձանց առաջնային օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունից ելնելով*

2023 թվականին Արթիկ համայնքում իրականացվել են հետևյալ սուբվենցիոն ծրագրերը

1.Արթիկ համայնքի՝ Արթիկ, Հառիճ, Արևշատ, Սարալնջ և Նահապետավան բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալապատում

Ծրագրի ընդհանուր բյուջեն – 171.648.000 ՀՀ դրամՀամայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը /40%/ - 69.963.200 ՀՀ դրամ

2.Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Իսահակյան թիվ 60 հասցեում գտնվող թիվ 1 մանկապարտեզի և Լեռնակերտ բնակավայրերի մանկապարտեզի շենքերի հիմնանորգում
Ծրագրի ընդհանուր բյուջեն –298.686.092ՀՀ դրամ
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը /25%/ - 74.671.523 ՀՀ դրամ

3. Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Թամանյան փողոցի ասֆալտապատում և Շիրակացի փողոցի մայթի կառուցում
Ծրագրի ընդհանուր բյուջեն – 40.099.712 ՀՀ դրամ
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը /55%/ - 22.054.842 ՀՀ դրամ

4. Արթիկ համայնքի Տուֆագործների փողոցի ասֆալտապատում և մայթերի կառուցում
Ծրագրի ընդհանուր բյուջեն -76.164.176 ՀՀ դրամՀամայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը /55%/ - 48.890.297 ՀՀ դրամ

5. Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով 15 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում

(Սասունցի Դավթի 9, Սասունցի Դավթի 6, Անկախության 17, Տոնականյան 32, Տոնականյան 38, Տուֆագործներ 39-րդ /բ, Տուֆագործներ 39-րդ /գ, Աբովյան 22, Լմբատ 1-ին թաղ 45, Լմբատ 1-ին թաղ 3, Լմբատ 1-ին թաղ 5, Լմբատ 2-ին թաղ 6, Լմբատ 2-ին թաղ 6, Լմբատ 2-ին թաղ 18, Լմբատ 2-ին թաղ 34, Լմբատ 2-ին թաղ 35
Այստեղ ՏԱՊ-ով ներառված է եղել 21 բազմաբնակարան շենքի տանիք, սակայն իրականացվել է 15 բազմաբնակարան շենքերի տանիքներ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն – 120.883.283 ՀՀ դրամ
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը /55%/ - 66.485.806 ՀՀ դրամ

6.Արթիկ համայնքի Նոր Կյանք և Սպանդարյան բնակավայրերի ոռոգման համակարգի կառուցում.
Ծրագրի ընդհանուր բյուջեն – 111.658.100 ՀՀ դրամՀամայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը /35%/ - 39.080.335 ՀՀ դրամ

7.Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Լմբատ 1 և Լմբատ 2 թաղամասերի կոյուղագծերի վերանորոգում

Համայնքի միջոցներով իրականացված ծրագրի արժեք - 29.145.000 ՀՀ դրամ

Ծրագրեր, որոնք տեղափոխվել են 2024 թ

1. Արթիկ համայնքի թվով 6 բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցում(Լեռնակերտ, Գեղանիստ, Հոռոմ, Մեծ-Մաթաշ, Փոքր-Մանթաշ և Հայրենյաց)

Ծրագրի ընդհանուր բյուջեն-178.185.960 ՀՀ դրամՀամայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը /40%/ - 71.274.384 ՀՀ դրամ

2. Արթիկ համայնքի Փանիկ և Սարալանջ գյուղերի մշակույթի տների վերանորոգման աշխատանքների 2-րդ փուլ

Ծրագրի ընդհանուր բյուջեն -126.116.450 ՀՀ դրամ
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը /55%/ - 71.014.047 ՀՀ դրամ

3. Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի կենտրոնական հրապարակի և հարակից 6 փողոցների բարեկարգում ՝ ասֆալտապատման միջոցով

Ծրագրի ընդհանուր բյուջեն – 253.537.090 ՀՀ դրամ
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը /55%/ - 139.995.400 ՀՀ դրամ

4. Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցումը մեկնարկել է 2023 թվականին և դրանք լինելու են շարունակական,

5. նույնը Արթիկ համայնքի Արթիկ և Արևշատ բնակավայրերում մոդուլային մանկապարտեզների կառուցում ծրագրին է վերաբերում, այստեղ շիրարարական աշխատանքները շարունակվելու են մինչև 2025 թվականի վերջը:

ՏԱՊ-ում ներառված չի եղել, սակայն իրականացվել են

1. 10 կվտ/ժամ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում Արթիկ համայնքի <<Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի տանիքին, որով սնուցվելու է ՀՈԱԿ-ը, Բաղրամյան և Անկախության փողոցների գիշերային լուսավորության հենասյուները, արժեքը՝ 3 390 000 ՀՀ դրամ:
2. ՄԱԿ-ի գրասենյակի հետ իրականացված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Սարատակ գյուղում նորոգվել և կահավորվել է գրադարանի

շենքը, ծրագրի արժեքը՝ 10 մլն ՀՀ դրամ, որից 1 մլն ՀՀ դրամը համայնքի ներդրումն է:

3. Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցության արդյունքում 2023 թվականին նորոգվել և կահավորվել է Արթիկի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում տրամադրված ազատ տարածք, այստեղ 2024 թվականից մեկնարկելու է <<Արթիկի երիտասարդների տանը>>: Շինարարական աշխատանքների համար համայնքապետարանը հատկացրել է 6 291 000 ՀՀ դրամ, ընդհանուր շինարարական աշխատանքները և կահավորումն ավարտվել է, շուտով կենտրոնը կսկսի իր աշխատանքները:

4. <<Կանայք հանուն զարգացման>> ՀԿ-ի հետ համատեղ <<Անուշավանի Սուրեն Սոսյանի անվան արվեստի և սպորտի դպրոց>> ՀՈԱԿ-ում բացվել է թանգարան, համայքի ներդրումը եղել է 500 000 ՀՀ դրամ:

5. Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ԼՖ ծրագիր շրջանակներու 2023 թվականին ձեռք բերել ընդհանուր 5 միավոր տեխնիկա, 2024 թվականին նախատեսվում է ևս 4 միավոր տեխնիկայի ձեռքբերում՝

- անիվավոր տրակտոր՝ օժանդակ սարքավորումներով - 2 հատ
- ինքնթափ ԿԱՄԱԶ մակնիշի մեքենա - 2 հատ
- ամենագնաց կիսաբեռնատար տեխօգնության մեքենա՝ օժանդակ սարքավորումներով և բենզինային գեներատորով - 1 հատ

2024-ին նախատեսվում է ձեռք բերել

- մինի ամբարձի՝ օժանդակ սարքավորումներով -2 հատ
- բազմաֆունկցիոնալ անիվավոր տրակտոր՝ օժանդակ սարքավորումներով՝ 2 հատ

Ծրագրի ընդհանուր բյուջեն – 320.000.000 ՀՀ դրամ, համայնքի ներդրում՝ 16 000 000 ՀՀ դրամ:

6. Ֆրանսիայի քույր քաղաք Վո-ան-Վլենի կողմից Արթիկին է տրամադրվել Ռենո մակնիշի աղբատար մեքենա:

7. ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Կանաչ Էներգիան՝ ի նպաստ արդյունավետ գյուղատնտեսության» ծրագրով ընդգրկվել են համայնքի 4 բնակավայրերի՝ Գետափ, Գեղանիստ, Սարատակ, 60 շահառուներ: Ծրագրի շրջանակներում փոքր ֆերմերային տնտեսություններին տրամադրվել են կաթիլային ոռոգման համակարգեր, տնկիներ՝ հատապտղային այգիների համար, էլեկտրական չրանոցներ, ինչպես նաև արևային կայաններ: Ծրագրի բյուջեն մոտ 50 Հազար Եվրո է եղել, համայնքը ներդրում չի ունեցել: Նշենք, որ Լուսակերտ բնակավայրում նույն ծրագիրն իրականացվել է 2022 թվականին:

2023 թվականին ՏԱՊ-ում ներառված է եղել, սակայն չի իրականացվել

ՏԱՊ-ում ներառված է եղել, սակայն չի իրականացվել մեկ դրամաշնորհային ծրագիր Արթիկ համայնքում կենցաղային թափոնների տեսակավորում, տեսակավորման համար նախատեսված տարաների տեղադրում դրամաշնորհային ծրագիրը, որը 16 000 ՀՀ դրամ էր, դրամաշնորհային մրցույթի շրջանակներում չի շահել: